ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկում և հաշվետվողականություն ապահովելու նպատակով իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ վերապատրաստումներ, իրազեկման արշավներ, դասընթացներ՝ հանրային ծառայողների, հիմնական և ավագ դպրոցների աշակերտների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների և սովորողների, բուհերի դասախոսների և ուսանողների, ինչպես նաև դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների համար, կազմակերպել աշխատաժողովներ՝ ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ, մշակել Հանձնաժողովի դերի և կարևորության բարձրացմանն ուղղված տեսանյութեր, ինֆոգրաֆիկաներ, ստատիկ վիզուալներ և այլն:

Ստորև ներկայացվում է համեմատական թվային տվյալներ 2022-2024 թվականներին Հանձնաժողովի կողմից իրականացված վերապատրաստումների և դասընթացների մասնակիցների քանակի վերաբերյալ.



	Հանրային ծառայողներ	Մանկավարժներ և ծնողներ	Ուսանողներ	Աշակերտներ	ԶԼՄ-ներ	ՔՀԿ-ներ
2022թ.	597	272	100	0		
2023թ.	940	260	75	330	73	
2024թ.	883	226	139	522	23	21

Ըստ գծապատկերի 2022-2024 թվականների ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված վերապատրաստումներին և դասընթացներին մասնակցել են թվով 2420 հանրային ծառայողներ, 758 մանկավարժներ և ծնողներ, 314 ուսանողներ, 852 աշակերտներ, 96 ՋԼՄ ներկայացուցիչներ, 21 ՔՀԿ ներկայացուցիչներ:

2024 թվականին հանրային ծառայողների շրջանում, առաջին անգամ կազմակերպվել է «Կանխարգելիր կոռուպցիան» խաղ-մրցույթը՝ «Կորիզ» կրթական ծրագրի հետ համագործակցությամբ, որին մասնակցել են շուրջ 330 հանրային ծառայողներ՝ ՀՀ տարբեր պետական մարմիններից: Խաղ-մրցույթի նպատակն էր ամրապնդել և բարելավել հանրային ծառայողների գիտելիքները վարքագծի կանոնների և բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ:

Ստորև ներկայացվում են խաղ-մրցույթի վերաբերյալ վիճակագրական տվյալներ.



Խաղ-մրցույթի ավարտից հետո ստացված վիճակագրական տվյալները վկայում են, որ խաղայնացումն ապահովել է միջինում 9,43 տոկոսի աճ, ինչը ցույց է տալիս այս մեթոդի արդյունավետությունը:

Բարելավման ցուցանիշներն ըստ թեմաների

Ընդհանուր արդյունքները վկայում են, որ մասնակիցները բարելավել են իրենց արդյունքները հետևյալ կերպ՝



Թեմա	Առաջին խաղ ճիշտ պատ.	Վերջին խաղ ճիշտ պատ.	Բարելավում
Անհամատեղելիություն	73.4%	81.8%	11.4%
Վարքագծի սկզբունքներ	72.9%	81.7%	12.1%
Շահերի բախում	80.4%	86.5%	7.6%
Նվերներ	68.5%	79.4%	15.9%
Հանրային ծառայություն	82.4%	87.9%	6.7%

Վերլուծություն
Վերլուծված տվյալներն արձանագրում են այն թեմաները, որտեղ արձանագրվել են ամենամեծ բարելավման արդյունքները, հատկապես՝ «Նվերներ» (15.9% բարելավում), ինչը ցույց է տալիս այս թեմայի նկատմամբ մասնակիցների տեղեկացված լինելու աճը:

Վերլուծված տվյալները բացահայտում են այն թեմաները, որտեղ արձանագրվել են բարելավման ամենաբարձր արդյունքները, մասնավորապես՝ «Նվերներ» բաժինը (15,9 տոկոս բարելավում), ինչը ցույց է տալիս այս թեմայի նկատմամբ մասնակիցների տեղեկացված լինելու աճը:

2024 թվականին Հանձնաժողովի դերի և կարևորության բարձրացմանն ուղղված տեսանյութերի, ինֆոգրաֆիկաների, ստատիկ վիզուալների, ընդհանուր դիտումների քանակը սոցցանցերում և հեռուստատեսությամբ (գովազդի միջոցով) կազմել է 8.289.529, որոնց վերաբերյալ թվային տվյալները ներկայացվում է ստորև:



Գծապատկերի համաձայն հրապարակվել են թվով 10 հոլովակներ, 5 ինֆոգրաֆիկաներ, 8 ստատիկ վիզուալներ և 1 տեսանյութ:

Ստորև ներկայացնում ենք նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում 2022-ից 2024 թթ. ընթացքում հրապարակված նորությունների վերաբերյալ թվային տվյալներ:



Գծապատկերի համաձայն 2022-ից 2024թթ.-ի ընթացքում Հանձնաժողովի կայքէջում հրապարակումների թիվը կազմել է՝ 430, ֆեյսբուքում՝ 569, իսկ տեսանյութերի թիվը՝ 88: